ՎԴ/0221/05/24

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 հուլիսի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/0221/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 30-ի որոշումը,

ՊԱՐԶԵՑԻՆՔ

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Հովնան Շահբազյանը 2024 թվականի հունվարի 5-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ ք. Երևան, Կենտրոն Ձ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի

նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 17-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է այն հիմնավորմամբ, որ ներկայացված պահանջից հստակ չէ, թե ներկայացվել է նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ պահանջ, թե գործարքն անվավեր ճանաչելու պահանջ: Ուստի առաջարկվել է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ինչպես նաև համալրել ոչ բավարար փաստական տվյալները, մասնավորապես՝ ներկայացնել տվյալ նոտարական գործողությունը մերժելու վերաբերյալ ապացույցներ:

3. Հովնան Շահբազյանը 2024 թվականի փետրվարի 12-ին կրկին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

4. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մարտի 14-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

6. ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Արսեն Մկրտչյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանի՝ 2024 թվականի մարտի 29-ի որոշման համաձայն՝ թիվ ՎԴ/0221/05/24 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

7. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և նշանակվել է նախնական դատական նիստ:

8. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 30-ի որոշմամբ հայցվորին առաջարկվել է նույն որոշումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում հստակեցնել հայցապահանջը՝ Դատարան ներկայացնելով նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցապահանջ:

9. Հայցվորի ներկայացուցիչը 2025 թվականի մարտի 17-ին ներկայացված հայցապահանջի հստակեցմամբ խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից ք. Երևան, Կենտրոն, Ջ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը:

10. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 13-ի որոշմամբ պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

11. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 30-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

12. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հուլիսի 1-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

13. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 77-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասին՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի հունիսի 13-ի որոշմամբ գործը

վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Տվյալ դեպքում, (…), հայցվոր Հովնան Շահբազյանի ներկայացուցիչը, դատական նիստի ընթացքում պնդելով 2025 թվականի մարտի 17-ի գրավոր դիրքորոշմամբ Դատարան ներկայացված հայցապահանջի հստակեցումը, հայտնել է, որ սույն գործի շրջանակներում հայցվորն ըստ էության վիճարկում է ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ քաղաք Երևան, Կենտրոն, Զ. Բայրոնի փողոց, թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագրի իրավաչափությունը, նաև հայտնել է, որ նոտարական գործողության կատարման մերժում տվյալ դեպքում առկա չէ և հստակեցնելով հայցապահանջը՝ խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել հիշյալ պայմանագիրը։*

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ պայմանագրի անվավերության /ոչ իրավաչափ լինելու/ հիմքերը սահմանված են քաղաքացիական օրենդրությամբ, այսինքն, հայցվորի ներկայացուցչի կողմից դատական նիստի ընթացքում հստակեցված պահանջով վեճը, այն է՝ ոչ իրավաչափ ճանաչել առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև հաշվի առնելով վերջինիս հայտարարությունն առ այն, որ հայցվորի նպատակն ըստ էության առուվաճառքի պայմանագրի իրավաչափության վիճարկումն է, լուծվում է մասնավոր-իրավական նորմերի միջոցով, այսինքն՝ վիճելի իրավահարաբերությունը կրում է մասնավոր բնույթ, Դատարանը գտնում է, որ այնուամենայնիվ, հստակեցված պահանջն ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին, ուստի այն անհրաժեշտ է վերահասցեագրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քաղաքացիական դատարան»[1]:

14. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 110-114:

դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, իրավահարաբերության ծագման պահին գործող 220-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14, 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19, 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի հունիսի 30-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Գործի քննության ընթացքում հայցվոր Հովնան Վասիլի Շահբազյանի ներկայացուցիչը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել «Հայցապահանջի հստակեցում» վերտառությամբ փաստաթուղթ, որով, ըստ էության, շարունակել է պնդել հայցի հիմքում դրված փաստարկները՝ հղում կատարելով «Նոտարիատի մասին» օրենքի 40-րդ, 41-րդ, 42-րդ հոդվածների և Հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի խախտումներին: Հայցվորի ներկայացուցիչը պնդել է, որ նոտարն իր գործողությամբ՝ առանց պատշաճ լիազորությունների ստուգման, առանց անձնագրային և իրավական հիմքերի հավաստիացման, վավերացրել է գործարք, որը հանգեցրել է հայցվորի գույքային իրավունքների խախտման:*

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը նախ արձանագրում է, որ «Հայցապահանջի հստակեցում» վերտառությամբ փաստաթղթով հայցապահանջի բնույթը չի փոփոխվել. այն չի տարբերվում նախնական ներկայացված հայցից և ըստ էության շարունակում է վերաբերել նոտարական գործողության իրավաչափության վիճարկմանը:

Ինչ վերաբերում է 2025 թվականի մայիսի 29-ին՝ ժամը՝ 11:30-ին, կայացած դատական նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցչի բանավոր պարզաբանումներին, Դատարանը հարկ է համարում նշել, որ նույնիսկ եթե դրանք

ուղղված են եղել հայցապահանջի իմաստի կամ նպատակի բացահայտմանը, չեն կարող գնահատվել որպես հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխություն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի իմաստով: Այս եզրակացությունը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ «Հայցապահանջի հստակեցում» վերնագրով դատավարական փաստաթղթի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ որևէ որոշում չի կայացրել: Ավելին, եթե ենթադրվող փոփոխությունը հանգեցնելու էր Վարչական դատարանի ընդդատության փոփոխության, ապա այդ պարագայում վարչական դատարանը պարտավոր էր մերժել նման փոփոխությունը՝ ելնելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումից:

Ստացվում է, որ ՀՀ վարչական դատարանում գործի քննության ընթացքում հայցի հիմքերը մնացել են անփոփոխ: Այսինքն, գործի քննության առարկան նախկինի պես մնում է նուրարական գործողության իրավաչափության գնահատումը՝ ոչ թե քաղաքացիաիրավական գործարքի (պայմանագրի) անվավերության հարցի լուծումը՝ որպես ինքնուրույն պահանջ: Այս առումով կարևոր է ընդգծել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Լ. Թադևոսյանի, ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հ. Բեդևյանի, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Ա. Մկրտչյանի, ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Ա. Դավթյանի, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Հ. Ասատրյանի կողմից 2024 թվականի մարտի 29-ին կայացված որոշման մեջ հստակ արձանագրվել է, որ Հովնան Վասիլի Շահբազյանի հայցադիմումի հիման վրա հարուցված սույն գործն ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը՝ հաշվի առնելով այն, որ հայցը բխում է նուրարի գործողության իրավաչափության վիճարկումից:

Նման պայմաններում Դատարանն արձանագրում է, որ թե՛ «Հայցապահանջի հստակեցում» փաստաթղթով, թե՛ 2025 թվականի մայիսի 29-ին՝ ժամը 11:30-ին, կայացած դատական նիստում ներկայացված բանավոր պարզաբանումներով որևէ կերպ չեն փոխվել այն սկզբնապես ներկայացված իրավական և փաստական հիմքերը, որոնք ձևավորել են տվյալ գործի քննության

բովանդակությունը: Հետևապես, գործի քննության առարկան շարունակում է հանդիսանալ նոտարական գործողության իրավաչափության գնահատումը և չի վերածվել քաղաքացիաիրավական գործարքի անվավերության հետ կապված վեճի՝ որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պահանջ:

Բացի այդ, Դատարանը նաև արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով առկա չէ իրավաչափ այլ միջոց, քան գործի ենթակայության որոշման հարցով կրկին դիմել ՀՀ վճռաբեկ դատարան՝ չնայած այն հանգամանքին, որ սույն գործով այդ հարցը մեկ անգամ արդեն իսկ լուծվել է»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

15. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/0221/05/24 գործն ըստ Հովհան Շահբազյանի հայցի ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

16. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

---

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 3-րդ, թերթեր 3-5:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[3]*:*

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[4]*:*

17. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միաժամանակ, ենթակայության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ՝ հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման օբյեկտիվ հատկանիշները, որոնց ուսումնասիրությամբ գործը քննող դատարանը որոշում է տվյալ վեճի ենթակայության հարցը:

Միաժամանակ, ենթակայության ինստիտուտը կոչված է անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները

---

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ենթակա չլինելու պատճառաբանությամբ: Այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Ուստի դատավարության կողմերի համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ վարչական դատարանին վերապահված վերհասցեագրման ինստիտուտի կիրառմանը դիմելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Արսեն Մկրտչյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանի՝ 2024 թվականի մարտի 29-ի որոշման համաձայն՝ թիվ ՎԴ/0221/05/24 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանին: Նշված որոշմամբ արձանագրվել է, որ հայցադիմումի ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորի փաստարկները հանգում են նրան, որ նոտարի կողմից համապատասխան նոտարական գործողությունը կատարելիս, այն է՝ առուվաճառքի պայմանագիրը վավերացնելիս, վերջինիս կողմից առանց պատշաճ փաստաթղթերի համապատասխանության ստուգման, անփույթ աշխատանքի արդյունքում վավերացվել է գործարք՝ թույլ տալով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 40-րդ, 41-րդ հոդվածների խախտում, որի հետևանքով Հովնան Վասիլի Շահբազյանը կրել է նյութական մեծ վնասներ: Այսինքն՝ հայցվորը հայցադիմումով ներկայացված պահանջի հիմքում դրել է նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկումը:

Հետևաբար, չնայած այն հանգամանքին, որ կրկին ներկայացված հայցապահանջով հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Երևանի նոտարական

տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը, որպիսի ձևակերպմամբ պահանջը ձևական առումով ընդգրկվում է մասնավոր իրավահարաբերությունների ոլորտում, սակայն հայցի առարկան հիմնավորող փաստարկների ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորի նպատակը նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկումն է, այն է՝ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին առուվաճառքի պայմանագիրը վավերացնելու նոտարական գործողության իրավաչափության վիճարկումը, որի հետևանքով վնաս է պատճառվել հայցվորին[5],

- ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և նշանակվել է նախնական դատական նիստ[6],

- ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 30-ի որոշմամբ հայցվորին առաջարկվել է նույն որոշումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում հստակեցնել հայցապահանջը՝ Դատարան ներկայացնելով նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցապահանջ՝ նշելով, որ հայցապահանջը ներկայացված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ հայցադիմումը դատարան ներկայացնելու իրավահարաբերության պահին գործող խմբագրության 220-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետին համապատասխան, ուստի, առաջարկել /մատնանշել/ է հստակեցնել հայցապահանջը և այն ներկայացնել նշված իրավակարգավորումներին համահունչ՝ ներկայացնելով նոտարական գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցապահանջ[7],

- Հայցվորի ներկայացուցիչը 2025 թվականի մարտի 17-ին ներկայացված հայցապահանջի հստակեցմամբ խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից ք. Երևան, Կենտրոն, Ջ.

---

[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը՝ նշելով, որ հայցվորի պահանջը նոտարի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու մասին է, քանի որ նոտար Նունե Սարգսյանի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագիրն իրավաչափ չէ, և այն վավերացվել է օրենքի մի շարք խախտումներով[8],

- 2025 թվականի մայիսի 29-ի դատական նիստում հայցվորի ներկայացուցիչը կրկին հստակեցրել է հայցի առարկան՝ խնդրելով անվավեր ճանաչել վերոնշյալ պայմանագիրը,

- գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 13-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն հիմքով, որ հայցվորի ներկայացուցչի կողմից դատական նիստի ընթացքում հստակեցված պահանջով վեճը, այն է՝ ոչ իրավաչափ ճանաչել առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև հաշվի առնելով վերջինիս հայտարարությունն առ այն, որ հայցվորի նպատակն ըստ էության առուվաճառքի պայմանագրի իրավաչափության վիճարկումն է, լուծվում է մասնավոր-իրավական նորմերի միջոցով, այսինքն՝ վիճելի իրավահարաբերությունը կրում է մասնավոր բնույթ, այնուամենայնիվ, հստակեցված պահանջն ընդդատյա է ընդհանուր իրավասության դատարանին, ուստի այն անհրաժեշտ է վերահասցեագրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քաղաքացիական դատարան[9],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի հունիսի 30-ի որոշմամբ գտել է, որ թե՛ «Հայցապահանջի հստակեցում» փաստաթղթով, թե՛ 2025 թվականի մայիսի 29-ին, ժամը՝ 11:30-ին կայացած դատական նիստում ներկայացված բանավոր պարզաբանումներով որևէ կերպ չեն փոխվել այն սկզբնապես ներկայացված իրավական և փաստական հիմքերը, որոնք ձևավորել են տվյալ գործի քննության բովանդակությունը: Հետևապես, գործի քննության առարկան շարունակում է հանդիսանալ նոտարական գործողության իրավաչափության գնահատումը և չի

[8] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

վերածվել քաղաքացիաիրավական գործարքի անվավերության հետ կապված վեճի՝ որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պահանջ[10]:

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-17-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ սույն գործի ենթակայությունն արդեն իսկ մեկ անգամ քննության առարկա դարձվել է, որի արդյունքում ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդնյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Արսեն Մկրտչյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանի՝ 2024 թվականի մարտի 29-ի որոշմամբ նշվել է, որ սույն գործով պահանջի հիմքը ոչ թե առուվաճառքի պայմանագրի կնքման առնչությամբ ծագող մասնավոր հարաբերություններն են, այլ նոտարի գործողությունների վիճարկումը, հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից: Արդյունքում, որոշվել է, որ սույն գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը: Նշված որոշումից հետո կրկին սույն գործը վերահասցեագրելը՝ այն հիմնավորմամբ, որ ՀՀ վարչական դատարանի կողմից կատարվել է հայցապահանջի հստակեցման վերաբերյալ մատնանշում, սակայն հայցվորի կողմից ձևակերպված պահանջը բխում է մասնավոր իրավահարաբերություններից, ըստ էության, կրում է խիստ սուբյեկտիվ և ձևական բնույթ, ուստի չի կարող ընդունելի համարվել, քանի որ հայցվորի կողմից կատարված հայցապահանջի հստակեցման արդյունքում սույն գործով ներկայացված վիճելի իրավահարաբերության բնույթի փոփոխություն չի կատարվել:

Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ սույն վարույթով **առերևույթ առկա է դատական շրջապտույտի, գործի ողջամիտ ժամկետում քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման վտանգ**՝ հաշվի առնելով, որ սույն

[10] Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

գործով հայցադիմումը փոստային առաքման եղանակով ներկայացված է եղել դեռևս 2024 թվականի հունվարի 5-ին, սակայն մինչ օրս քննարկման առարկա է դարձել միայն սույն գործով ձևակերպված հայցապահանջի և ըստ այդմ՝ սույն գործի ենթակայության հարցը:

Նման պայմաններում, սույն գործի ենթակայության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Արսեն Մկրտչյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանի՝ 2024 թվականի մարտի 29-ի որոշման առկայության պայմաններում ՀՀ վարչական դատարանի կողմից սույն գործը առանց ծանրակշիռ հիմնավորման կրկին վերահասցեագրելը չի բխում արդարադատության շահից:

20. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/0221/05/24 գործն ըստ Հովնան Շահբազյանի հայցի ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, Հովնան Շահբազյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/0221/05/24 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/0221/05/24 գործն ըստ Հովնան Շահբազյանի հայցի ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից ք. Երևան, Կենտրոն Ձ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ